ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը եւ Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովը, (այսուհետ՝ Կողմեր)՝

կարեւորելով Հայաստանի եւ Ռուսաստանի ժողովուրդների միջեւ բարիդրացիական սկզբունքների վրա հիմնված բարեկամության, փոխըմբռնման եւ համագործակցության ավանդական հարաբերությունների նշանակությունը, միմյանց իրավունքների եւ շահերի պաշտպանության զարգացումն ու ամրապնդումը,

ընդունելով երկու երկրների միջեւ բարեկամական եւ փոխշահավետ կապերի զարգացման նպատակով միջխորհրդարանական համագործակցության կարեւորությունը եւ հրատապությունը,

նշելով Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ բարեկամության, համագործակցության եւ փոխօգնության մասին պայմանագրի արդյունավետ իրականացման անհրաժեշտությունը,

ղեկավարվելով միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներով եւ նորմերով,

ձգտելով խորհրդարանական գործունեության իրավական եւ այլ ոլորտներում հետագա փոխգործակցության եւ փոխադարձ կապերի խորացման,

հաստատելով իրենց հավատարմությունը պառլամենտարիզմին՝ որպես ինքնիշխան պետությունների ժողովրդավարական զարգացման հիմք,

հիմք ընդունելով եւ զարգացնելով 1994 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի եւ Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջեւ միջխորհրդարանական համագործակցության մասին» համաձայնագրի դրույթները,

համաձայնվեցին ներքոշարադրյալի մասին.

Հոդված 1.

Կողմերը պարտավորվում են աջակցել Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջխորհրդարանական համագործակցության զարգացմանը, նպատակ հետապնդելով քաղաքական, սոցիալ-տնտեսական, մարդասիրական եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում իրավահավասար հարաբերությունների հետագա խորացման պայմանագրաիրավական հիմքի ստեղծմանը:

Հոդված 2.

Կողմերը պայմանավորվեցին նպաստել Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ կնքված պայմանագրերի եւ համաձայնագրերի վավերացման գործընթացի սինխրոնիզացմանը, կարգավորել ընդունված օրենսդրական ակտերի մշտական փոխանակումը:

Հոդված 3.

Կողմերը, ղեկավարվելով սույն Համաձայնագրի իրականացման անհրաժեշտությամբ եւ նպատակամետ լինելով ազգային օրենսդրությունների մերձեցմանը, օրենսդրական ակտերի մշակման եւ ընդունման գործելակերպի ուսումնասիրմանը, խորհրդարանական մարմինների աշխատանքի փորձի փոխանակմանը, պատրաստակամություն են հայտնում՝

կանոնավոր կերպով կատարել տեղեկատվության փոխանակում երկու խորհրդարանների ընթացիկ օրենսդրական գործունեության մասին, ակտիվացնել խորհրդարանական հանձնախմբերի եւ հանձնաժողովների միջեւ, փոխգործակցությունը.

իրականացնել համագործակցություն իրավական տեղեկատվության միջպետական համակարգի ստեղծման եւ կիրառման, խորհրդարանական ծառայությունների բանկի համատեղ նախապատրաստման հարցում.

աջակցել Կողմերի աշխատակազմերի, ինչպես նաեւ փորձագետների եւ հետազոտական ծառայությունների միջեւ մշտական կապերի հաստատմանը:

Հոդված 4.

Կողմերի փոխգործակցության կազմակերպման եւ կոորդինացման համար հիմնադրվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի եւ Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի համագործակցության մշտական գործող միջխորհրդարանական հանձնաժողով (այսուհետ՝ Միջխորհրդարանական հանձնաժողով), որը կազմված է Կողմերի ներկայացուցիչներից: Միջխորհրդարանական հանձնաժողովի գործունեությունը կոորդինացնում են համանախագահները: Միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահներին եւ Կողմերի ներկայացուցիչներին հաստատում են երկու Կողմերը՝ նրանց կանոնակարգի եւ ընթացակարգի համաձայն:

Հոդված 5.

Միջխորհրդարանական հանձնաժողովն աջակցում է Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության երկկողմ միջպետական հարաբերությունների զարգացմանը, համագործակցության բոլոր ոլորտներում շփումներին, խորհրդատվություններին եւ տեղեկատվության փոխանակմանը, ինչպես նաեւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հիմնահարցերի վերաբերյալ Կողմերի դիրքորոշման համաձայնեցմանը:

Հոդված 6.

Միջխորհրդարանական հանձնաժողովը, Կողմերի միջպետական եւ միջխորհրդարանական հարաբերությունների վերլուծության եւ դրանց հետագա ընդլայնման հեռանկարների հիման վրա կազմակերպում է իրավական կարգավորման ոլորտներում ազգային օրենսդրությունների մերձեցման ուղղությամբ Կողմերի օրենսդրական գործունեության եւ ջանքերի կոորդինացումը, որոնք փոխադարձ հետաքրքրություն են ներկայացնում, նախապատրաստում է համագործակցության բոլոր ոլորտներում երկու պետությունների խոհրդարանների եւ նրանց մարմինների համար առաջարկություններ եւ նախաձեռնություններ:

Հոդված 7.

Միջխորհրդարանական հանձնաժողովի աշխատակարգը որոշվում է միջխորհրդարանական հանձնաժողովի կանոնակարգով, որը հաստատում է միջխորհրդարանական հանձնաժողովը

Հոդված 8.

Միջխորհրդարանական հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում միջխորհրդարանական համագործակցության իրադրության ուսումնասիրման եւ վերլուծության, նրան համակարգված եւ պլանավորված բնույթ տալու նպատակներով տարեկան երկու անգամից ոչ պակաս հերթականությամբ՝ Երեւան եւ Մոսկվա քաղաքներում:

Հոդված 9.

Միջխորհրդարանական հանձնաժողովի գործունեությունը ֆինանսավորում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը եւ Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի երկու

պալատները՝ առանձին, հատկացումների միջոցով, որոնք դուրս են գրվում այդ նպատակներով ծախսերի նախահաշիվների համաձայն:

Հոդված 10.

Փոխադարձ պայմանավորվածության համաձայն՝ Կողմերը կարող են սույն Համաձայնագրում կատարել փոփոխություններ եւ լրացումներ:

Հոդված 11.

Սույն Համաձայնագրի կիրարկման կամ մեկնաբանման վերաբերյալ տարաձայնությունները լուծվում են Կողմերի համաձայնությամբ՝ բանակցությունների, փոխխորհրդատվությունների ձեւով կամ այլ միջոցներով:

Հոդված 12.

Հանդիպումների, խորհրդատվությունների ժամկետները, ինչպես նաեւ մակարդակը, քննարկվելիք հարցերը Կողմերը որոշում են նախապես՝ հատուկ արձանագրությամբ:

Հոդված 13.

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո, դադարում է գործել 1994 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի եւ Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջխորհրդարանական համագործակցության մասին» համաձայնագիրը:

Հոդված 14.

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից եւ գործում է Կողմերից յուրաքանչյուրի համար՝ մինչեւ մյուս Կողմին՝ դրա գործողության դադարեցնելու իր մտադրության մասին գրավոր ծանուցման պահից վեց ամիս անց:

Կատարված է Մոսկվայում «18» փետրվարի 1998 թվականին, երկու օրինակից, յուրաքանչյուրը՝ ռուսերեն եւ հայերեն լեզուներով, ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարազոր են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ՝	**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ՝**
Խ.Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	**Գ.Ն.ՍԵԼԵԶՆՅՈՎ Ե.Ս.ՍՏՐՈԵՎ**